



Ղևոնդ Ալիշան

Յուշիկք հայրենեաց Հայոց

Կարմիրն Վարդան

Ա

ԱՐԵԳԱԿՆ իր տարեկան ընթացից մէջ դեռ չէ հասած իր բարձրագոյն դիտանոցը, կրակաթափ աչքերով նայելու արարածոց վրայ . դեռ հայկականն մրագարդ մարերի կու շարունակէ իր գունաւոր օրերը, մանաւանդ մեր հայրենեաց բարձրատափ գաւառաց մէջ . եւ դեռ այս օրուան նշանակեալ ամսաթուիս (2 յունիս – 25 մարերի) ըստ վկայութեան անուշգրոյցն Եղիշէին, «Գարնանային է ժամանակն եւ դաշտքն ծաղկալից»։ Բայց արդէն Արարատայ ցածուն ծաւալ դաշտաց մէջ տաքն կոխած է . եւ եթէ առաւօտն եւ երիկուն գով այլ ըլլան, բոլոր օր մը անցընելու համար, Հայկակ, պէտք է նման նագելոյն Ասքայ փնտռել հով հով սարեր, գով գով ջրեր . զքօսանս բարձանց եւ զքօսանս հովտաց»։

Ահա գեղեցիկ ընդարձակ բարձրահովիտ մ'այլ, որ ասկէ 3000 տարի առաջ ընտրուած էր իբրեւ գերագոյն եւ հաճոյագոյն հովասուն տեղի Հայկագն նահապետաց, անոնց զօրաց եւ ազատաց, «ուր էին հովոց գետինք թագաւորացն Հայոց», ըստ բանից հին ազգային պատմըչի . որոյ արեւմտեան հիւսիսային կողմէն՝ արարատեան Մասեաց բարձրաբերձ դարերն դուրանալով դաշտանան . արեւելքէն գետն Երասխ դարավագ կու պատի, հարաւային կողմէն՝ ոչ շատ բարձր լեռանց շարք կ'անջրպետեն գայն ի Կոզայովտէ եւ ի պարատափէն Վանայ։ Այս սահմանադրեալ դաշտահովիտս իբր 3 4000 ոտք

բարձր յերեսաց ծովու, ցածագոյն Երասխայ դաշտին մէջ բնակող Հայկազն նահապետաց ամարանոց եղաւ, Քրիստոսէ 13 դար առաջ, երբ գբօսասէրն եւ միշտ գուարթն Շաւարշ (որպէս ստուգաբանէ Գր . Մագիստրոս) շինեց հոն քաղաքաւան մը, ի բնակութիւն ամառուան, եւ իր անուամբն կոչեց Շաւարշաւան . յորմէ բոլոր շրջակայ կողմանքն եւ գաւառն կոչեցան Շաւարշական կամ Շաւարշան . մինչեւ Քրիստոսի Բ դարուն սկիզբը Այրաքաջն Սմբատ սպարապետ Բ . Արտաշիսի արշակունոյ՝ Ալանաց Արդոզ կամ Արտագ գաւառէն պատերազմի գերիներ բերելով, հրամանաւ իր սանիկ թագաւորին հոն բնակեցուց, եւ անոնց հայրենի գաւառին անուամբ՝ Շաւարշանն այլ ըսուեցաւ Արտաղ կամ Արտաղական գաւառ . իսկ հիմայ իր անուանի եւ գարմանալի քարաբերդ քաղաքին անուամբ կ'ըսուի Մակու: Այս բնութեան եւ արուեստի ընտրած եւ հրաշակերտ տեղս՝ սրբազան եւ հին գորութիւն մ'այլ պատուեր, սիրեր, սրբեր է . կրօնքն՝ Հայաստանեայց եկեղեցոյ խորագոյն խորհրդոց եւ հրաշափառագոյն հանդիսից տեղ ըրեր է Շաւարշական դաշտերը: Վերոյիշեալ Արտաշիսի հայրն՝ Սանատրուկ, կ'երեւի թէ քան զհինն Արտաշատ եւ քան զհոր ձեռակերտ նորոգած Մծբինն կամ Մծուրս՝ սիրէր գայս տեղս, եւ իր անունը թողուց հոն լեռնաբլրի մը վրայ, Սանատրուկ լեռոն, որ թերեւս հիմայ Տիքմէ կ'ըսուի . ասոր քով եկաւ առաքեալն Քրիստոսի Թաղէոս, եւ աշակերտեց գղուսոր թագաւորին՝ զօրհորդն Սանդուխտ, առաջին կոյս վկայուի Քրիստոսի, եւ ընդ նմին նահատակեցաւ սքանչելի վկայութեամբ . որոց յիշատակին՝ Հայադիրն սեփականած է քաղոց (դեկտեմբեր) ամսոյն մէջ օր մը: Այս երկուքին վկայարանն այլ՝ (քրիստոնէութեան հնագոյն ուխտատեղեաց եւ տաճարաց մէկն) կու պատուի մինչեւ ցայսօր Թաղէի վանք, անուամբ, որ եւ ի պատիւ առաքելոյն՝ Հայոց գլխաւոր եպիսկոպոսական թեմոց մէկն եղաւ, եւ ի միջին դարս՝ մի ի չորից արքեպիսկոպոսաց՝ որոց հարկ էր գտուիլ յօժման նորընտիր կաթողիկոսի: Առաջին երեք դարուց քրիստոնեայք, գաղտնապէս կու պատուէին այս սրբազան տեղս, առ ահի հեթանոս թագաւորացն Հայոց . նախախնամութիւնն այլ մասնաւոր տեսչութեամբ կու հսկէր անոր վրայ . եւ ուր Հայոց քրիստոնէութեան առաջին արեգակն ծագեցաւ, անտի երկրորդ անգամ ալ ծագել տուաւ զարեգակն Լուսաւորիչ . որ յետ 200 տարոյ վկայութեան սուրբ առաքելոյն եւ Սանդխտոյ եւ անոր հօրքրօջն Աւագուհեայ, անոնց նշխարաց հանգստարանին քով իր էութեան սկիզբն առաւ՝ ի ծոց ուրիշ Ոգոհեայ, կնոջ Անակայ, երբ կու գայր սա ի Պարթեւաց իբր փախստական խաբել եւ սպաննել զԽոսրով թագաւորն

մեր:

Ի՛նչ զարմանալի եւ աստուածախառն տեսչութիւնք . Հայոց առաքելոյն Թադէոսի թաղման միայնարանն՝ Հայոց նոր առաքելոյն՝ Գրիգորի՝ յղութեան առագաստ: Ո՛րքան սքանչելի է Շաւարշան՝ մեզի այսպիսի հոգեւոր հանդիսից տաճար ըլլալովն, քան թէ մեր թագաւորաց հովանոց:

Այս երկու սրբախորհուրդ դիպաց՝ նորակերպ նման մ'այլ հանդիպեցաւ նոյն տեղուանքը, Լուսաւորչի եղելութենէն 200 տարի ետեւ, որ թէ քաղաքական եւ թէ կրօնական կերպարանօք հոշակեցաւ . եւ ահա այն դէպքն է գոր նշանակէ Հայադիրն այս ամսակէտիս . որ ասկէ տասնեւչորս դար առաջ (451 թուին Քրիստոսի, յունիսի 2) էր շաբաթ օր Հոգեգալստեան տօնին . յորում հանդիպեցաւ Շաւարշանի երրորդ մեծ ազգային քաղաքակրօն դիպուածն, այն է **ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ:**

Բ

Այս դիպուածս, այս պատմութիւնս, այս անունս անգամ այնքան հոշակեալ եւ համբաւեալ է յազգիս, որ ամենէն քիչ տեղեկութիւն ունողն այլ՝ երբ լսէ Քաջ կամ Կարմիր Վարդան՝ սրտատրոփ կու ցատքէ . եւ թերեւս ոմանք ուզեն յանկարծ գտնուիլ ինչուան նոյն արտագական գաւառին մէջ, նոյն Շաւարշական դաշտը, նոյն Աւարայրի գեղին քով, նոյն Տղմուտ գետոյն եզերքը, ուր այն մեծ եւ բաղդասահման ճակատամարտն եւ անմահախառն գործն կատարուեցաւ: Բանայ փափագողն՝ ժամանակակից հեղինակաց, Եղիշէի եւ Ղազարայ Փարպեցոյ, գեղեցիկ գրուածքը եւ մանրամասն պատմութիւնները, եւ ժամ մը, երկու ժամ՝ անոնց հետ ժուռ գայ հոն . հոն՝ ուր Հայութեան անջինջ, անմոռաց, յաիտենական արձանաց մէկն կանգուն կայ եւ պիտի մնայ: Իսկ ես հետդ, Հայկակ, կաղ ի կաղ ընթացիւք կ'ուզեմ ման գալ, եւ քանի մը քան հեռուէն դիտել այն մեծ տեսարանէն:

Կանխենք ուրեմն քան զմեծ գործողութիւնն՝ զտնէ օր մը, զոնէ գիշեր մը, այն գիշերն որ յունիսի առաջին օրը երկրորդին կու խառնէ . փութանք փոքր Մասեաց սարերէն դարվար սահելով՝ ինչուան յետին բարձրատափն, որ կու նայի

Շաւարշան դաշտին վրայ: Արդէն այս երեկոյիս նման՝ 14 դար առաջ այլ՝ այս անհատնում գիշերային լապտերս, այս բազմատես լուռ վկայս, այս խորհրդապահս լուսինս՝ սոյնպէս բոլորացեալ լուսալիբ կու բարձրանար մեր եկած արեւմտեան դարից ետեւէն Մասեաց–Ոտին կողերէն, Արարատայ դաշտին հորիզոնէն . եւ ահա հանդարտ համասփիտ եւ իբրեւ իդակաթ կակոռ ճառագայթներով կու լուսաւորէ մեր փնտռածը, Շաւարշական Աւարայրի ընդարձակ դաշտը, որ մեր կեցած տեղէն դէպ ի յարեւելս հարատյ երկնցած, իրեն ձեւիչ կ'առնու Տղմուտ գետոյն ընթացքը, այն որ արեւմտեան հիւսիսային կողմէն իջնելով ծանր եւ պղտոր ալիքները կու թափէ յԵրասխս, եւ այդ եռանկլինաձեւ կամ երկայնաբոլոր դաշտին մէջ՝ իբրեւ մոխրագոյն երկայն շղթայ մը կու շարժի լուսնին նշուլից ներքեւ: Նեղ ու նուազ ջուր մ'է նա . բայց ի՛նչ լայն վիհ, ի՛նչ խոր խտրոց՝ իր եզերքը տարածուած երկու աննման բանակաց մէջ . որոնցմէ մեր կողմը մեզի մօտ եղածն՝ լուսնէն եւ կրակէ աւելի պայծառութեամբ լուսաւորուած ճերմակ ու գոյնագոյն կու տեսնենք . մէկայլն՝ կարծեն թէ հեռաւորութենէն աւելի պատճառաւ մը՝ խառն ու խաւար կ'երեւայ, թէ եւ ահեղ անտառի պէս սփռուած ու դաշտին մեծ մասը ծածկած: Այս երկու բանակաց միջի շարժմունքն եւ գործքերն այլ ի՛նչ տարբեր . հեռաւոր եւ սեւ բանակն միայն սովորական պատերազմի պատրաստութիւններ կու ցուցնէ . իսկ մօտաւորս աւելի կրօնական եւ հայրենական հանդիսարան կ'երեւի քան պատերազմի մարզարան: Ասիկայ է Հայոց բանակն, վերջին բազմաթիւ բանակ՝ գումարեալ յանուն համօրէն Հայութեան, իր հնացեալ իշխանաց ձեռօքն . 66,000 Հայ պատերազմողք, ձիաւոր եւ հետեւակ, խաչանիշ վրանաց եւ դրօշուց տակ ժողոված են՝ զագգ եւ զկրօնս պաշտպանելու: Ի՛նչ պանծալի գունդ եւ ի՛նչ բազմութիւն կարճաց մեր աչքին առջեւ: ... Սակայն ի՞նչ են այդ վեց ու կէս բիր գօրքն Հայոց՝ Հայաստանի միահեծան եւ միահաւան տէրութեան օրերուն՝ հարկաւոր եւ վտանգի ժամանակ գումարած բանակին քով: Սովորական ատեն՝ Հայոց աշխարհապահ գօրութիւն էր 120,000 որոց 40,000ի չափ թագաւորական գունդն էր . 84,000 այլ նախարարաց եւ տոհմից . իսկ մեծ պատերազմաց ժամանակ՝ կրկին եւ երեքկին աւելի ըլլալն՝ այսօր դիմացի բանակնիս կու վկայէ . յորում հազիւ քսան եւ հինգ տոհմի կամ ցեղի իշխանք եւ գօրք կան, որոց որոշեալ գօրաբաժինն 20,000ի չէր հասներ . այս ցեղերուն շատին մէկ մասն, եւ բուն իսկ նախարարն այլ (մեծ դժբաղդութեամբ) գետոյն այնդիի կողմն են, պարսկական բանակին հետ . եւ ցաւելով պէտք է տեսնել հոն այլ նոյն չափ թիւ

մը Հայոց . (վասն զի ըստ վկայութեան պատմըչին՝ ուրացեալն Վասակ թէ իր Միւնեաց աշխարհէն եւ թէ ուրիշներէ «ժողովեաց զամենայն գայթակղութիւն, եւ արար գունդ զօրաց բազմաց», որք կամաւ կամ ակամայ խառնեցան ընդ թշնամիս հայրենեաց եւ եկեղեցոյ . ըստ տեսլեան սրբոյ Լուսաւորչին՝ գառնիքն սպիտակք դառնալով ի սեաւ գայլս): Գառնց ու գայլոց գունդերն միատեղ առնելով՝ 120 հազար Հայ կ'երեսան դիմադէմ Աւարայրի դաշտին մէջ . զորս բաժնելով կամ ջոկելով ըստ աշխարհաց Հայաստանի՝ կու տեսնենք որ հին Հայոց 15 կամ քսան աշխարհաց թուէն, միայն հինգ կամ վեց աշխարհքէ եկած են այս գունդերս . որ են Այրարատ, Տուրուբերան, Վասպուրական, Միւնիք, Մոկք . իսկ ուրիշ աշխարհքներէ հազիւ ոմանց մէկ երկու գաւառ կամ տոհմ կու յիշուի . Մեծ Հայոց չորս մասին գրեթէ երեքն դուրս է այս դաշտէս . բոլոր արեւմտեան մասն՝ Յունաց կայսեր իշխանութեան տակ է . եւ թէպէտ Հմայեակ՝ եղբայր մեծին Վարդանայ, կու ջանայ կ'աշխատի անոնցմէ այլ զօրք ժողովել, բայց ոմանք չեն շարժիր կայսեր վախէն, ոմանք այլ ուշանալով չեն հասնիր ատենին . իսկ հիւսիսային եւ արեւելեան գաւառք՝ Վրաց եւ Աղուանից խառնուած՝ անոնց հետ անշարժ կու կենան . հարաւային ամուր աշխարհք այլ՝ Աղնձիք եւ Տնորիք՝ գրեթէ ինքնագլուխ չէզոք կու մնան . թէ եւ ասոնց ամենուն այլ հրաւեր եւ աղաչանք գրկուած էր . եւ ոչ միայն ասոնց, այլ եւ Վրաց, Աղուանից եւ Հոնաց, գալ միաբան Պարսից դէմ կենալու . բայց երկու խորամանկ եւ ազգութաց Վասակք, մէկն յարեւմուտք կեցած, մէկայլն յարեւելք, ամենայն հնարքով եւ ստութեամբք զանոնք հեռու բռնեցին Վարդանեան գնդէն: Այս տեսութենէս կ'իմացուի որ այսպիսի ծանր հարկի ատեն՝ եթէ բոլոր Հայք միաբան մէկ կողմն ժողովէին, Վարդան փոխանակ 66,000ի կրնար 300,000 զօրք այլ ունենալ: Որչափ այլ մեծ երեւի այս թիւս, դեռ շատ պակաս է համեմատելով վերը ցուցած հաշուին եւ թուոյ աշխարհաց եւ գաւառաց եւ զօրաբաժնին Հայոց: ... Թողլով երբեմն կարելին եւ այժմ անկարելին, դառնանք եղածին, եւ դիմացնիս կեցած մեր հայակոյտ բանակին:

Չորս գունդ կամ թեւ բաժնուած է այս բանակս . երեքն երկայնատարած շարուած են Աւարայրի դաշտին մէջ Տղմուտայ եզերքը . վասն զի դիմացը թշնամին այլ նոյնպէս տարածուած է . իսկ մէկայլն՝ երեքին ետեւէն մէջ տեղուանքը կեցած է, իբր վերջապահ եւ օգնական վտանգելոց . մեր կեցած տեղոյն մօտինն է՝ Առաջին եւ աջ թեւն հայ բանակին, որ Տղմուտայ գետոյն այլ

առաջակողմն է, ուստի կու վարել ալիքը դարվար յարեւելս յԵրասխա . այս առաջին մասին թեւապետն է հաւատարիմ Հայոց ներքին Հազարապետն, աշխարհատեսուչն, որ Մալխազ կ'ըսուի, եւ է իշխանն Խորխոռունեաց ԽՈՐԷՆ, կարգեալ փոխանակ ուրացող իշխանին Գաղիշոյ . Հայկայ որդւոյն անունը եւ քաջութիւնը 3000 տարիէ վերջ այլ փայլեցնող: Իրեն օգնական գնդապետքն են, բայց յայոց պայազատաց հին նախարարաց, ԱՐՍԷՆ ԸՆԾԱՅԻՆ եւ ՆԵՐՍԷՅ ՔԱԶԲԵՐՈՒՆԻ . ասիկայ Վանայ ծովուն հիւսիսային կողմէն եկած . առաջինն՝ որ Արդար կոչմանք կու գովուի ի պատմըչէն, թէ եւ ամէն ցեղէ աւելի քիչ նահատակակից ընկեր ունեցաւ այս պատերազմիս մէջ, բայց գորահանդիսին ատեն՝ այս բանակիս մէջ գտնուող ամեն իշխանացմէ աւելի եւ անհամեմատ աւելի զօրք կու տար, 4000 հոգի, որ (եթէ սխալ չէ թիւն) կու նշանակէ կամ բազմաթիւ կամ պատերազմող ու սահմանապահ տոհմ մը, որուն պատմութիւնն եւ տեղն անգամ մեզ յայտնի չէ, բայց թերեւս Վասպուրականի Ընծահից կամ Անծահից գաւառն ըլլայ, որ յետոյ յանուն գլխաւոր բերդաւանին՝ Կոտոր ըսուեցաւ, (հիմա Քիրդիւր, ի սահմանի պարսկական Հայոց): Միջին թեւոյն ընդհանուր հրամանատարն է ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ, որ այս Հայոց բանակիս մէջ, յետ սպարապետին (Վարդանայ) առաջին նախապատի իշխանն է, եւ ըստ կարգի ազնուութեան բարձրագոյն է քան գնա այլ . (վասն զի հին Ասորեստեանի տիեզերակալ թագաւորներու ցեղէն է) . ըստ արդեանց այլ արժանապէս առաջին ճանչցիր գնա, թէ եւ նախ իշած պատմըչաց (Եղիշէի եւ Ղազարայ) մէջ չգտնես անոր գեղեցիկ յիշատակները, զոր անգգամ եւ խորթ ձեռք մը (Բարծումա ասորին) վերուց ջնջեց գեղեցկագիր պատմութենէն: Վահանայ ընկեր գնդապետք են ՄԻՐՇԱՊՈՒՅ ՄԱՐԴՊԵՏՆ կամ իշխանն Մարդպետութեան, որոյ կալուածքն էին հին ատեն Նախիջեւան գաւառին սահմաններն, եւ պաշտօնն էր Հայոց թագուհւոյն եւ արքունի գանձուց հազարապետութիւնն, որ եւ գունդ մը արքունի զօրաց ունէր իր ձեռքին տակ, ասոր հետ է եւ ԱՐՏԱԿ նախարարն Մոկաց, որ թէ եւ կոշտ ու խոշոր երկրի եւ բնակչաց տէր էր, այլ ինքն շատ կիրթ եւ ազնիւ մարդ, եւ ըստ վկայութեան ժամանակակից պատմըչին՝ մտացի, համէստ, քաջ եւ երանելի, եւ Վարդանայ սպարապետին յատուկ սիրելի ու սրտակից մտերիմն, թէ ազնիւ եւ մտացի բարուցն համար, եւ թէ հին ծանօթութեանն եւ երախտեացն: (Վասն զի յետ մահուան Ս . Սահակայ՝ երբ պարսիկ մարգպանք եկան ի Հայս՝ մեր աշխարհին կարգերը վեր վար ընելու, Վարդան թողլով իր իշխանութիւնը եւ երկիրը՝ քաջուեցաւ յաշխարհն Մոկաց,

յերկիր Արտակայ, ամուր բերդ մը, եւ մեծ պատիւ եւ սէր գտաւ այս իշխանէս, այնպէս որ երբ յետ ժամանակաց՝ Պարսից թագաւորին դուռը՝ Հայոց նախարարք տագնապած էին, իրենց բերան առին գԱրտակ, որ համոզէ գՎարդան իրենց հետ միաբանելու ի խորհուրդ ուրացութեան): Հիմայ Վարդան գԱրտակ բանակին միջոցը դրաւ: Այս երեք մեծ իշխանաց հետ կային ուրիշ մեծամեծ նախարարաց պայագատք եւ թագաւորական գորաց գլխաւորներ: Բանակին ձախ թելոյն գորավարքն էին, ՓԱՓԱԳ ԱՌԱԻԵՂԵԱՆ . թէ ինքն եւ թէ իր ցեղն շատ ծանօթ չեն մեր պատմութեան մէջ, եւ բնակութիւննին ուր տեղ ըլլալն այլ յայտնի չէ . թէ եւ կ'երեւի մեզ Այրարատայ կողմերն ըլլալ . ԹԱԹՈՒԼ ՎԱՆԱՆԴԵՅԻ, Բասենոյ ընդարձակ դաշտերուն իշխեցողն, ասոնց ընկեր ՏԱՃԱՏ ԳՆԴՈՒՆԻՒՑ՝ գարմանալի մականուանեալ, գլխապետ շատ հեռու եւ օտարասկիզբն տոհմի մը, Քանանացոց, Քամայ ցեղէն, որք ըստ պատմութեան՝ հալածեալք ի Յետուայ եւ յԻսրայելացոց՝ անցան յԱփրիկէ, եւ մէջերնէն մէկն Քանանիդատ անուամբ եկաւ ի Հայս, եւ ցեղն ըսուեցաւ Գնթունիք կամ Քնդունիք: Այս (ձախ) թելին դիմաց՝ Պարսից աջ թելը մեծ պատրաստութեամբ եւ բազմութեամբ կեցած էր . անոր համար սպարապետն Վարդան՝ ընդհանուր տեսչութենէն զատ մասնատրապէս այս թելին առաջնորդել կամ օգնել յանձն առաւ: Բանակին երեք թելերուն ետեւ չորրորդ օգնական կամ վերջապահ դրաւ քաջ եւ հաւատարիմ խումբ մը, գնդապետ կարգելով իւր հարագատ եղբայրը ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ, եւ իւր միւս սրտակից եւ նիզակակից բարեկամն ու սիրելին՝ ԱՐՇԱԻԻՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ . (ինչպէս որ յետոյ ասոր որդիքն՝ Ներսէս եւ Հրահատ՝ իր եղբորորդոյն եւ իր յաջորդին Վահանայ՝ սրտակիցք՝ եւ բազկակիցք եղան): Արշարայ կալուածն էր Այրարատայ հին Երասխաձոր գաւառը, որ յետոյ Կամսարական եւ Արշարունիք ըսուեցաւ: Այս երկու հաւատարմաց եւ քաջաց հետ՝ չորրորդ գնդին կ'առաջնորդէր նոյն իսկ բոլոր բանակին առաջնորդն եւ սպարապետն, ինքն Մամիկոնէից տէրն, Մեծ, Քաջ եւ Սուրբ ԿԱՐՄԻՐՆ ՎԱՐԴԱՆ:

Պատերազմին ատեն՝ աւելի ձախ թելոյն քով գտուեցաւ, իսկ հիմա՝ գրեթէ ամեն տեղ ամեն գնդի քով կ'երեւի, ամեն մէկուն պէտք եւ պատրաստութիւնը քննելու տեսնելու, եւ հարկաւոր տալու, ըսելու . ամեն կողմ կարծես կու լսուի նոր խօսած ատենաբանութիւնն . «Ի բազում պատերազմունս մտեալ է իմ, եւ ձեր ընդ իս»:

Ամեն բան կարգաւորելէն եւ վաղուան պատերազմի յարմարցընելէն ետեւ, կու

դառնայ Վարդան չորս գնդերէն գատ ուրիշ եւ աննման գնդի մը մէջ, որ առաջիններէն ոչ շատ հեռու ժողովեր էր, վրանի տակ . եւ էր Հայոց եկեղեցոյն ուխտն, հոն էին կաթողիկոսն Յովսէփ, որ աշխարհին քաղաքական շփոթից համար դեռ հանդիսատրապէս չէր օծուած, եւ գատ ուրիշ եպիսկոպոսաց եւ երիցանց՝ հոգելից եւ հրաշալից երէցն ՂԵԻՈՆԳ, որ բոլոր ուխտապահ Հայոց հայր եւ բանակին երկրորդ սպարապետ մ'էր, եկեղեցոյ եւ հայրենեաց աննման նահատակ մը, որուն ամենայն կրօնասէրք եւ ազգասէրք, աշխարհիկք եւ եկեղեցականք՝ կրնան նախանձիլ: Ս . Սահակայ եւ Մեսրոպայ վախճանելէն ետեւ, ինքն՝ որ անոնց երիցագոյն աշակերտն էր, իբրեւ երեսփոխան մը եղաւ անոնց . խորհրդովն եւ օրինական կու շարժեր գեկեղեցին եւ գաշխարհն: Եւ ահա այս գիշերս այլ՝ մեր հաւատարիմ բանակին դիմաց եւ Վասակայ դրկած հրապուրիչ պատգամատրաց՝ երկար քաջալերական ատենաբանութեամբ մը Վարդանայ ըսածները կու հաստատէ կրօնական փաստիք: Չօրականք՝ այդ երկու հոգեշունչ բերանոց փշնունքէն (Վարդանայ եւ Ղեւոնդայ) վառուաց՝ պատերազմէ վեր, յաղթութենէ վեր բանի կու պատրաստուին, մարտիրոսութեան, պսակուելու յերկինս, եւ պահ մը զինուց պատրաստութիւնը դադրեցընելով, հոգոյ պատրաստութիւնը կու սկսին, Մէջերնէն երիտասարդք ոմանք, այն ատենուան թոյլ տրուած սովորութեամբ դեռ երախայ ըլլալով, կու փութան ի սուրբ աւագան մկրտութեան, կանչելով, «Այս գիշեր ջրով, վաղը առտու արեամբ»: Շաւարշանի դաշտաց մէջ լճակ մը կու նշանուի Ագ կէօլ, սպիտակ լիճ անուամբ, կու սիրեմ կարծել թէ այս լճակիս մէջ մկրտուած ըլլան այն եռանդուն երիտասարդքն, որք գիշերը նորակնքոց ճերմակ պատմուճանը հագան, առտուն քաջաց փայլուն գրահը, երիկունը՝ վկայից կարմիր ծիրանին: ...

Հիմայ հասարակ գիշերն անցեր, եւ դիւցազնական կամ քաջասրբեան օրը ծներ է . դեռ չլուսցած՝ կու փութան քահանայքն գիշերային եկեղեցական պաշտօնը աւարտելու, եւ աստուածային գերագոյն նահատակութեան հանդէսը կատարելու, սուրբ պատարագը: Թերեւս Լուսաւորչի եւ Տրդատայ, կամ մեծին Ներսիսի եւ Մուշեղայ օրէն ի վեր՝ այսպիսի վեհ, վսեմ, սխրալի, սրբալի հանդէս մը կատարուած չէր . պատերազմական փողերէն առաջ լսուեցաւ եկեղեցոյ կոչնակն, սուրբ հօտապետաց քաղցրիկ խաղաղութեան ձայները, եւ երբ խաղաղարարն ամենայն աշխարհի անոնց ձեռքով սուրբ հացի կերպարանօք ծածկեալ՝ բարձրացաւ ի հաճութիւն Հոր եւ ի պաշտութիւն մարդկան, վաթսուն

հազար կտրիճ հաւատացեալք՝ անձամբ եւ զինուք խոնարհեցան, երկրպագեցին, հաղորդուեցան սուրբ խորհրդոցն, մարմնոյ եւ արեան Քրիստոսի Աստուծոյ, դրսի գրահներէն զօրաւոր գրահ մը հազան հոգով, եւ կանգնելով կանչեցին . «Հաւասարեցէ մահս մեր ընդ մահու արդարոցն, եւ հեղումն արեան մերոյ ընդ արեան սուրբ մարտիրոսացն, եւ հաճեցի Աստուած կամաւոր պատարագաս, եւ մի՛ տացէ զեկեղեցի իւր ի ձեռս հեթանոսաց»։ Ապա փութացան իւրաքանչիւր իր գնդին, իր տեղւոյն, զէնքերնին գրահնին պատրաստելու, եւ ուժերնին կազդուրելու քիչ մը կերակրով, յառաջ քան զարեւուն երեւալն։ Ոմանք այս բաներուս զբաղած, ոմանք այլ վրանաց դրան քով կամ իրենց կահուց եւ զինուց վրայ կոթնած, աշուրնին Հայկին եւ Վահագնին համեստեղութեանց վրայ, լոկկ մոկկ երկնից եւ երկրի հետ խօսելով մտքերնէն, յանկարծ ձիերուն դափրը ու խրխինջը լսելով՝ կու դառնան այն կողմը, ու սրտերնէն ինչե՛ր կ'անցնի, կու թօթուն վարսագեղ գլուխնին, հայկական մեծ ու պայծառ աչքերն կու թաւալին լայնալիճ յօնից ներքեւ . աղեղնաձիգ մատերով խարտեաշ պերեւեշտնին շտկոտելով՝ կու նային կ'երթան մութն ի լոյս հովտէ հովիտ, լեռնէ լեռ՝ ինչուան այն տեղն, այն շէնքը՝ ուր բնիկ հայրենի տնակն է, ուր թողուցին իրենց կակուղ սիրելիները... ո՛հ, ո՞րքան աւելի պիտի հեռանան քանի մը ժամէ վերջ . արդեօք վաղը այս ժամուս դեռ երկրի՞ս վրայ՝ թէ յերկնի՞ց պիտի նային անոնց՝ զոր սուրբ սէրն չիբաժներ ոչ յերկրի ոչ յերկինս։... Երկրնցի՛ր քիչ մ'այլ՝ ով վերջին ժամ գիշերոյս, եւ թող մեր սիրասուն սրբասուն, քաջասուն Հայ երիտասարդաց՝ այսպիսի մտածութեամբք կամ սրտածութեամբք սպասել ռազմայարդար փողոց ձայնին, եւ դու եղեմաշունչ հայրենի հովիկ, (եթէ ստոյգ է զգայուն մարդկան կամ երգչաց ըսածն), անցիր ասոնց շրթանց քովէն, խառնուէ այն լայնաշունչ հազագներուն, եւ գնա՛ հրախառն համբուրից պէս հաղորդելու իրենց յիշածներուն, իրենց սիրածներուն... . Մենք հարկաւ եւ ոչ կամաւ՝ անցնինք գետոյն այն կողմը, թշնամեաց բանակն այլ քիչ մը ճանչնալու։

Գ

Այս Պարսից բանակս մեր աշխարհը եկածներուն մէջ մեծերէն մէկն է . եթէ Հայք հարկի ատեն ինչուան 300,000 եւ աւելի զինուոր կրնային հանել, Պարսք եւս առաւել, իրենց ընդարձակ աշխարհաց համեմատութեամբ, եւ հիմայ որ ուրիշ կողմանէ խաղաղութիւն ունէին՝ կրցան մեծաւ բազմութեամբ գալ, իրենց ամենէն

երեւելի գորավարներով, եւ ամենայն պատերազմական պատրաստութեամբք: Յազկերտ եւ իր խրատուն Միհրներսեհ՝ ինչուան Հնդկաստանի հրատանջ հովիտներէն Հայաստանի ձիւնեղէն բարձրադաշտաց վրայ խաւրեցին երամակս փղաց . գորս բանակին մէջ իրենց սպարապետն ի գունդս գունդս բաժանեց, կ*ըսէ պատմիչն, քաջաձի Հայոց հեծելոց դէմ շէին կրնար կենալ համաթիւ Պարսիկ ձիաորք, անոր համար այս անճոռնի քնթոնաւոր գագանաց վստահացեր էին, իրենց ընտիր ձիերն այլ Հայաստանէն կ'առնուին, եւ հաշտութեան ատեն՝ իրենց լաւագոյն յաղթող հեծեալքն՝ Հայք էին: Հիմայ այս գունդ գունդ փղաց երամակը միայն չորս հինգ խումբ այլ սեպենք կամ բոլոր մէկէն 50 փիղ (որ թէ եւ շատ, դեռ պատմչաց ցուցածէն շատ չ'երեւիր), մէկէն անոնց քով 150,000 Պարսիկ կու տեսնես, վասն զի կրկին կրկին կ'ըսէ պատմիչն թէ ամէն մէկ փղի քով 3000 սպառազէն գորականք կային, եւ կ'աւելցընէ, «Թող գայլ գորսն ամենայն» . որոնցմէ էր Մատեան քաջամարտիկ գունդն այլ, դարձեալ ուրիշ տեղ կ'ըսէ, որ սպարապետն Պարսից տեղեկանալով թէ 60,000 էն աւելի են Վարդանանք, եւ թէ որք են անոնց պարագլուխքն, մէկուն դէմ երեք հոգի կու պատրաստէր: Արդ այս ամենայն, եւ ասկէ դուրս Վասակայ ուրացակից գունդքն այլ, եւ Հոնք եւ ուրիշ բարբարոսք այլ մէկտեղ առնլով, եթէ Պարսից բանակը 250,000 գորաց կու հասնի՝ ըսենք, դեռ ճշմարտէն պակաս ըսած կ'ըլլամք, եւ ոչ այլ աւելի՝ եթէ 300,000 այլ ըսենք, մանաւանդ որ պատմըչաց մէկն կ'ըսէ ասոնց համար, թէ «տարածանէր երկայնէր ճակատն յերկայնութիւն դաշտին մեծի» . եւ յառաջ, «ի շրջապատ տեղի Տղմուտ դաշտին ... դակիշ ածեալ բանակէին»: Ղակիշ ըսածն է բանակին դորս դին ամրութիւն՝ ապահովութեան համար, գոր աւելի պարգաբար կու յիշէ առաջին պատմիչն: «Բանակն բոլորէր, փոս հատանէր, պատմէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրեւ զքաղաք ամենայն պատրաստութեամբք»: Վասն զի կու վախէին Պարսք թէ Վարդանանք յանկարծ վրանին հասնին, եւ կրնային այլ այնպէս ընել, ըստ Ղազարայ Փարպեցոյ . բայց ասիկայ յանդգնութեան գործ մը կ'ըլլար . եւ ամենայն պատրաստութիւն, մանաւանդ հոգեւորը՝ ընելու ատեն շէին ունենար . վասն զի երկու բանակներն այլ գրեթէ մէկ ատեն հասան պատերազմին տեղը . Պարսք՝ շերայ եւ Չարեւանդայ կողմերէն (Խոյի եւ Սալմաստայ), Հայք յԱրտաշատայ, պատերազմին առաջին օրը . եւ տեսան որ Պարսք նոր հասեր են եւ բանակնին ամրացընելու վրայ են: Պարսից սպարապետն էր Մուշկան Նիսալաւորտ (որ թերեւս նշանակէ թաւ երես . բուրդ

մօրուք), իրենց ամենէն երեւելի գօրավարն . եւ կ'երեւի թէ նոյն անձն է, որ Հայոց թագաւորութիւնը վերցուելէն ետեւ՝ երկու անգամ մարգպան դրուեցաւ ի Հայս, եւ հոն չգտած պատուին վրէժն առնուլ ուզեց այս առթիւ . իրմէ յարմար անձ մը չէին կրնար գտնել Միհրընթեսեհն եւ Յազկերտ: Պատերազմին ատեն ինքն կեցաւ ընդհանուր գօրավար բանակին կեդրոնը կամ մէջ տեղը, Պարսից ամենէն կտրիճ քաջաց քաջ անյաղթ եւ անմահ սեպուած գնդով, որ է Մատեան կամ Մատենիկն, որք Մակեդոնացոց փաղանգին պէս քովէ քով պարսպի նման անբաժ կու կենային եւ մէկտեղ շարժէին, եւ թէ մէկն ընկնար, տեղը ուրիշ մը կ'ամբողջացընէր գունդը: Ձախ թեին գօրագլուխ՝ կ'երեւի թէ էր Դովդը, որ եւ բոլոր բանակին մէջ նախապատիւ էր յետ Մուշկանայ, եւ Հայոց աջ թեին դէմ կու կենար (ընդդէմ Խորենայ) . բայց այս կողմէն պատերազմը չի գայրացաւ, կամ թէ երկու դիմամարտք այլ հաւասար քաջութեամբ կռուեցան իրարու հետ . այլ սաստկութիւնը արեւելեան կողմն էր, ուր էր Պարսից աջ թեւն . եւ հոն գումարած էին բոլոր նիզակակից ազգաց զօրքն, որոց մէջ գլխաւորք էին (դժբաղդաբար) Հայք եւ Կատիշք, որ են Հայոց արեւելեան սահմանակիցքն Կազբից ծովուն մօտերը . ասոնց այլ դրակից Գեղք (Տիլէն) . ասոնցմէ գատ Ապարհայիկք կամ Ապարհացիք, եւ Հոնք՝ որք ի հարկէ մեծաթիւ պիտի ըլլային: Հայոց սեւցած գնդին գլխաւորն պէտք էր ըլլալ ինքն վատն Վասակ, տէրն Միւնեաց, (որ քան գամեն ցեղ Հայոց՝ թագմաթիւ գօրաբաժին ունէր յաշխարհագումար հանդիսին Հայոց, 11,400 կոտող .) Միւնեաց իշխանին միաբանք էին իշխանք Բագրատունեաց, Խորխոռունեաց, Վահեւունեաց, Ապահունեաց, Ակէոյ, Ուրծայ եւ մասն մի Ամատունեաց եւ այլոց, որոց գօրաբաժինք գումարին 8000ի չափ, եւ Միւնեաց գնդին հետ 20000ի կու մօտենան . Վարդանանց գօրաբաժինէն գրեթէ աւելի են, ասոր համար ըսի՝ որ ասոնց չափ այլ կրնային հետեւող ունենալ եւ բոլորն 60 70000 ըլլայ: Այս երեք թեւերէն գատ էր չորրորդն, եւ անոր առաջնորդ Արտաշիր, իբրեւ վերջապահ, միանգամայն եւ փղապետ, որ մեծ խումբ մը գազաններով՝ մէկայլ գօրաց ետեւը կեցած էր, եւ ուր պէտք ըլլար՝ հոն օգնութեան պիտի շարժէր:

Դ

Բայց հոս չուշանանք, վասն զի ահա լուսացեր է պատերազմական օրն, օրն մեծ, օրն անմոռանալի: Երկու բանակներն իրենց հրամայուած տեղը եւ կարգը կու

բռնեն . Պարսից սպարապետն իր երեսուն բիր զօրաց եւ փղաց բազմութեան դիմաց՝ կու տեսնէ գրեթէ հաւասար երկայնութեամբ շարուած բանակ մը . բայց գիտէ այլ որ իրենին պէս թանձր չէ նա . հազիւ քանի մը կարգ զօրաց կան ետեւէ ետեւ . զայն այլ գիտէ (մեր ցառովը) որ անոնցմէ այլ ոմանք բոլոր սրտով միացած չեն բուն ուխտապահ Հայոց, այլ Վասակայ հրապուրանօք պղտորած . եւ եթէ վարպետ խաղ մը խաղայ՝ կրնայ զանոնք իր զօրաց հետ խառնել, կամ պատերազմէ դուրս հանել . գիտէ որ իր նիզակակից սեւցած Հայերն՝ այն որ Վասակայ հետ իրենց միամտութիւնը Պարսից ցուցնելու համար՝ աւելի քան գՊարսիկս քաջութեամբ պիտի կռուին, կամ աւելի ատելութեամբ . ինչպէս որ կ'ընեն թշնամացեալ բարեկամք: Ասոնք իրեն մէկ մէկ յոյս մեծ մեծ մխիթարութիւնք են . բայց քանի որ կու մտածէ թէ իր բուն թշնամեաց, թէ եւ քիչնոր այլ հաւատարիմ Հայոց՝ սպարապետն է Վարդան, այն ժամանակի (ըսենք ամեն ժամանակի) զօրավարաց օրինակ, եւ Պարսից թագաւորին անգամ՝ քաջութեամբն դեռ սիրելի եւ հարկաւոր անձ մը, Մուշկանայ բոլոր պատրաստութիւնն եւ բազմութիւնն տարակուսելի կ'երեւի, ու կու տագնապի: Բայց ժամն կռուոյ կու մօտենայ . կու ժողովէ գնդապետները ու զօրավարները, կու յիշեցընէ իրենց պարտքը, Վարդանանց կտրճութիւնը, քաջութեան եւ յաղթութեան վարձքերը, վատահութեան եւ փախստեան պատիժները եւ դատապարտութիւնը, եւ կու խաւրէ իրաքանչիւր իր կարգին:

Այս բաները լսելու կարօտ չէին Հայք, բաւական լցուած Վարդանայ, Ղեւոնդի եւ Քրիստոսի հոգով, որ դեռ սրտերնուն մէջ կու խօսէր . կրնար ուրեմն իրենց սպարապետն այլ քիչ մը այն գիշերուան վերջին պահին՝ առանձնանալ իր վրանին տակ . նախ խօսիլ ընդ Աստուծոյ եւ յանձնել իր կեանքը եւ մահը, որոց երկուքն այլ ստուգիւ կու փափագէր, եւ կու հաւատայր այն որ փոխել յանմահութիւն . ապա երկրիս վրայ հարկաւոր եղած բաներուն համար յետին կամքը աւանդել ի կտակ կամ ի սիրտ մտերմաց . մինչ սպասաւորքն եւ թիկնապահք գէնքերը եւ զարդերը կու պատրաստէին:

Ահա հագաւ, հեծաւ, զուարթացաւ Վարդան, արեւէն աւելի ցանկալի եւ սպասելի այն օր՝ իր սիրելեացն . ամենուն աչքն՝ ոչ այնքան թշնամեաց բազմութեանը վրայ սուկնամբ կու նայէին, որքան սիրով կու դառնային այն բարձրասուր կաթողիկէաձեւ շիկակարմիր վրանին, որոյ դրան վերեւ ոսկի արծուին

թեատարած, չորս բոլորն կարմիր–կանաչ–սպիտակ դրօշներ հովէին ծալուելով
ու բացուելով՝ իբր ծափ ծափի տուած կու հրաւիրէին գՎարդան . գՎարդան
հրաւիրելով՝ վրանին եզերքը պար առած պահապան ու պատուոյ գունդն՝ նշան
տուին, եւ սկսան շարժիլ . յանկարծ վրանին փեղկերը վերնալով բացուեցան,
թիկնապափք եւ սպայք, հեծեալք եւ հետեւակք՝ փայլ փայլ գէնքերով իբրեւ ամպէ
մը սկսան դուրս թափիլ . եւ խումբ մը ծաղկագգեստ կայտատ երիտասարդաց՝ 25
տարուրնէ վեր լուծ ձայն մը ձգեցին, որոտալուր, ահաւոր, վսեմ եւ քաղցր ձայն
մը, որ մեր յետին Արշակունի Արտաշէս թագաւորին սեւ օրէն վեր չէր լսուած... :
Արքունական երաժշտաց դասն էր, որ այն օր ի Վարդան կու ճանչէր Հայոց
թագաւորը, առաջնորդը, յոյսը եւ փառքը . եւ երբ մեծամեծ ոսկեփայլ դալարուն
եւ անդալար պղինձներն լայնաբոլոր բերաննին յերկինք շտկած՝ իբրեւ յետ
երկայն հառաչանաց՝ հայկական պատերազմի եղանակը հնչեցին, ո՛հ, բոլոր
բանակն, գետին ու լերինք թնդալով դոփելով որոտացին, Փա՛ռք, Հայոց, Սուրբ
սպարապետ, Վարդան քաջ: Եւ ահա յերեսն եկաւ քաջն այն, Կարմիրն այն
Վարդան, ճառագայթներուն ետեւէն դուրս վազող արեւուն պէս, իր
նախապապուն Մուշեղի նման՝ ճերմակ, ճարտուկ, ճախրասլաց, բարձրապինջ
բարձրափռինջ ձիուն վրայ յարմարած՝ քան թէ հեծած կամ նստած . վասն զի
ձին գրեթէ սանձի անկարօտ եւ տիրոջը տակ աւելի թեթեւցած քան թէ առաջ՝ չես
գիտեր կու խաղա՞յ թէ կու թոչի . իսկ տէրն իբրեւ եզեկիէլեան անուի մը վրայ
հանգչած՝ թեթեւութեամբ ամեն դի կու դառնայ, կու թոչի, կու հասնի: Ոսկէխառն
արծաթակոտ սպառագինութեան վրայ՝ ձգած է մեծ ծիրանի ու ոսկէթել սամոյր
օձիք վերարկուն, զոր արեւակերպ ականակոտ ապիզակ կամ ճարմանդ մը
կուրծքէն վեր կու միացրնէ, օղակներէն յակունքներ կախուած, եւ ինչուան
նոնագոյն կոշիկները կ'իջնէ . գլուխն արծաթախառն սաղաւարտ՝ ոսկէքանդակ
գարգանակաւ, որոյ կոնակէն դէպ ի գագաթն ոսկի արծուի մը կայ, եւ վարի
եզերքը բոլորած պսակաձեւ թագ մը, անոր վրայ այլ պլլուած բոլոր գերագոյն
իշխանութեան նշանը՝ աշխարհաւանդ ըսուած հանգոյցը, որոյ ծայրերն
ցցունագարդք՝ ուսոց վրայ կ'իջնեն: Բայց արդարեւ տեսութեան արժանի մասն՝
այն հանգուցին ներքեւ էր . բոլորակերպ, կարմրայտ գրեթէ ճառագայթարձակ,
գուարթ դէմը մը, նման եզիականն Արամագոյայ, բայց Ամպրոպայնոյն աչքերով:
Խաչգլուխ եւ խնձորգլուխ ձողերու եւ նիզական վրայ՝ բաց յեռագոյն դրօշից կու
ծածանին գանազան գունով եւ նշանով վառեր, Մամիկոնէից տէրութեան, Հայոց
սպարապետութեան, Յունաց ստրատելատութեան եւ Հայ թագաւորի

տեղակայութեան . գորս ուրախութեամբ ողջունելով 66,000 բերան՝ Պարսից անհուն բանակին եւ անճոռնի փղերուն ձայնն այլ կու խափանեն պահ մը: Վարդան յառաջ անցնելով իր սպայից գնդէն՝ մէկ մը ճերմակովը կու թռչի բանակին մէկ ծայրէն ինչուան մէկայլը, ողջունելով, խրախուսելով, գրեթէ նոր ոյժ մը փշելով, եւ ... նշան կու տայ սկսելու գպատերագմն: Ահա մէկէն կու սկսին գէնք ձգել վեց բիրքն Հայոց . ոմանք սպառագէնք (այսինքն բոլոր գրահ հագած), ոմանք մերկք (այսինքն անգրահ), եւ ասոնք են աղեղնատրքն, ոմանք վահանատրք, հետեւակք՝ նիզակատրք եւ սուսերատրք . աւելի շատն հեծեալք ծանր կամ թեթեւ գրահով:

Ե

Հինայ թողունք որ քիչ մ'այլ խօսի Եղիշէ . «Իբրեւ այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ եւ մեծաւ բարկութեամբ գայրանային, եւ գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան . եւ ամբոյս աղաղակին յերկոցունց կողմանց՝ իբրեւ ի մէջ անպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր . եւ հնչումն ձայնիցն՝ զքարանձաւս լերանցն շարժէր: Ի բազմութենէ սաղաւարտիցն եւ ի փայլին պատենագէն վառելոցն՝ իբրեւ նշոյլք ճառագայթից արեգական հասանէին: Նա եւ ի բազում սուսերացն շողալ, եւ ի ճօճել բազմախտուն նիզակացն՝ իբրեւ յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային: Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն . ո՞րպէս կոփիւնք վահանատրացն եւ ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին: Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին եւ գաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն, առ ի յանդուզն յաճակմանէն զմիմեանս բախելով . քանզի թանձրամիտքն յիմարէին, եւ վատասիրտքն լքանէին, քաջքն խիզախէին, եւ նահատակքն գոչէին»:

Այս մեծ ու բաղդավճիռ ճակատամարտս, ուր 300,000 եւ աւելի անձինք կոռեցան գրեթէ յառաւօտէ մինչեւ յերիկուն, որչափ նշանատր է սաստկութեամբն՝ նոյնչափ այլ քիչութեամբ մեռելոցն . երկու կողմէն մէկտեղ հազիւ 4 կամ 5000 մարդ ընկան . որոյ պատճառ, մէկ մը երկուքին այլ հմտութեամբ եւ վարպետութեամբ շարժելն է . մէկ մ'այլ բանակաց մէջտեղ գետ մ'ըլլալն, որով երկայն ատեն հեռուն նետաձգութեամբ եւ ուրիշ հեռաձիգ գէնքերով կռուին .

Հայք աղեղնաւորութեան մէջ շատ վարպետ էին, որով աւելի յաջողեցան Պարսից վրայ, բայց թուով նուազ ըլլալով՝ կրնային յօգնիլ առանց քշելու Պարսիկները, իսկ աստնք թէ եւ բազմաթիւ՝ չէին համարձակեր Հայ աղեղանց դէմ գետը անցնիլ, մանաւանդ առանց փղերու՝ գորոնք դժուար էր շարժել: Բայց կամաց կամաց երկու բանակն այլ սկան մօտենալ ի գետեզերքը, եւ հարկ էր որ մէկն կամ մէկայլն անցնի դիմացի կողմը իբր յաղթող . եւ Հայք առին այս առաջին յաղթութիւնը: Իրենց երկրին դար ու փոս դիրքն՝ զիրենք չարքաշ եւ փորձ ըրեր էին . յաջողութեամբ անցան ջուրը, մինչ Պարսիկք տարակուսեալ կու վխտային եզերքը: Հայք ջրէն ցատքելով առաջին թափով դիմացի եղողները քշեցին . բայց իրենք այլ սկսան Պարսից բազմութեան ոյժը իմանալ:

Հոս գրեթէ նորէն սկսաւ պատերազմն, եւ բաղդն յերեւան գալ: Բանակաց արեւմտեան թեւքն հաւասար իրարու կ'ընդդիմանային, եւ գրեթէ ինչուան վերջը սակաւաթիւ Հայք՝ Դողվրճայ դէմ կեցան, ինչուան որ իրենց երեք գնդապետ զօրավարքն այլ՝ քաջապէս ընկան նահատակուեցան դաշտին վրայ, Խորէն, Արսէն եւ Ներսէհ: Միջին թեւքն այլ նոյնպէս սաստիկ ճգամբ եւ գրեթէ հաւասար կու կռուէին . իսկ արեւելեան թեւերուն, ուր Հայք Հայոց դէմ էին, Վասակայ հրապոյրն զօրացաւ, եւ Վարդանանց կողմի թեւն սկսաւ տկարանալ . այն շփոթութեան ատեն գունդ մը անկէ գատուելով՝ փախաւ կամ պատերազմէն դուրս ելաւ . այս բանս բոլոր պատերազմը կերպարանափոխ ըրաւ: Աւելի մեծ շփոթութենէ ազատեց իր բանակը՝ արթուն եւ երազահաս սպարապետն, որ տեսնելով ձախ թեւին ետ քաշուիլը, վերջապահ ջոկով մը հասաւ օգնութեան, նորէն կարգի մտուց հաւատարիմները, եւ ինքն առաջ անցնելով ընկաւ Պարսից աջ թեւին վրայ . յորում ուխտագանց Հայք, եւ հիւսիսային ու արեւելեան ազգաց գունդեր կային, եւ քշելով տարաւ ձգեց անոնց միջին թեւին եւ փղակուտին վրայ: Նոյն ատեն Վահան Արծրունի այլ Հայոց միջին գնդան սաստիկ թափով յարձրկելով Պարսից միջին եւ բուն գնդին վրայ՝ խռովեց, շարժեց եւ դէպ յարեւելք քշեց . որով Պարսից երկու շփոթուած շարժած գնդերն այլ ընկան իրարու վրայ, ու Վարդանայ եւ Վահանայ սուրերուն մէջ . եւ եթէ աստնք շատուոր ըլլային, կամ նոյն ատեն վերջապահ գունդն այլ իրենց օգնութեան հասնէր, թերեւս բոլոր Պարսից բանակը պղտորէին . վասն զի Վահանայ եւ Վարդանայ բախմունքէն՝ անվանելի Մատեան գունդն անգամ պատռուեցաւ, 140 անմահ Պարսիկ՝ Հայոց սպարապետին եւ Արծրունի նիզակակցին սուրերով մահացան, մեւայլներն այլ

փախչելու վրայ էին . եւ ահա վարած կորած Վասակայ շար գլուխն տեսնուեցաւ իր յետ քշուած գնդին մէջ . Վարդան արդար վրէժխնդրութեամբ դարձաւ այդ անհծապարտին վրայ, որ իր թելադիր սատանային սիրած օձուն պէս՝ սողոսկելով սպրդեցաւ, փղերուն մէջ փախաւ պահուրտեցաւ: Թերեւս Վարդանայ պէտք չէր այնչափ յառաջ նետուիլ կամ հոս ուշանայ . բայց ինքն արդէն ըլլալիքը գուշակելով, աւելի երկնից նահատակ քան յերկրի յաղթող ըլլալ փափագէր: Պարսից սպարապետն Մուշկան՝ որ կենաց եւ մահու, յաղթութեան կամ յաղթուելու ժամը հասած կու տեսնէր, որչափ որ տագնապեցաւ ի Վարդանայ, անոր շատ յառաջելն այլ իրեն օգուտ առաւ . տեսաւ որ անոր եւ մնացեալ Հայոց միջին ու ձաթ թելոյն մէջ՝ մեծ միջոց կայ . իր շփոթեալ գորաց դասերը եւ Մատենիկ գունդը ժողվեց սրտապնդեց, ու մաս մը այն հեռու մնացեալ Հայոց վրայ դարձուց, մաս մ'այլ Վարդանայ եւ Վահանայ դէմ կենալու . եւ ասոնց ետեւէն գալու եւ մէջ փակելու՝ պատուէր տուաւ շուտով, փողեց կանչեց Արտաշրի՝ որ փղերը առաջ քշէ . ինքն այլ իր յատուկ գնդով յառաջ անցաւ: Եւ այսպէս երկու երեք կողմէ պատելով հոն, «Կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն՝ ոչ սակաւ նախճիրս ի տեղուջն գործեաց . յորում տեղուջ եւ ինքն իսկ արժանի եղեւ առնուլ զկատարեալ նահատակութեանն պսակ»: Վարդանայ հետ հոն պսակուեցաւ իր պատուակից եւ նիզակակիցն Վահան Արծրունի . այս երկու պարագլխոց պէս՝ իրենց գնդից ինչուան վերջին շունչը առաջնորդելով եւ կռուելով՝ ընկան մեծափառ քաջութեամբ աջ թելին երեք գորագլուխքն, գոր վերը յիշեցինք, ձախ թելին գնդապետն այլ Տաճատ Գնթունի . այս թելէն եւ միջին թելէն երկերկու գորաւոր գորագլուխք սպրեցան . ասոնց տեղ ուրիշ գորապետ իշխանք ընկան ԱՐՏԱԿՆ ՊԱԼՈՒՆԻ, ՀՄԱՅԵԱԿ ԴԻՄԱՔՍԵԱՆՑ, ՎԱՀԱՆ ԳՆՈՒՆԻ եւ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆ, որով յայտնի եղաւ՝ որ թէ Վարդան եւ թէ իր հաւատարիմ նիզակակիցքն՝ մտքերնին դրեր էին՝ կամ հալածել քշել գթշնամին, կամ ինչուան վերջը պատերազմելով մեռնիլ . եւ արեամբ քաւել բոլորովին իրենց սուտ ուրացութեան յանցանքն այլ: Ասոր համար երբ Պարսից զօրքն մտան ի Հայս, Վարդան հրաւեր խաւրեր էր իրեններուն՝ ոչ այնքան ի պատերազմն՝ որքան ի մարտիրոսութիւն, ըսելով . «Գունդ բազում հասեալ գայ, բերելով աստուածասիրաց պսակս երկնաւորս . արդ որ ոք ցանկայ առնուլ՝ աճապարեցէք, զի մի՛ վրիպեսցի որ եւ զղջանայցէ ... Եւ գայս լուեալ ճշմարտասիրացն եւ զանմահութիւն սիրողացն՝ դորդեցան, ելեւելս առնելով զմիմեանքք, որպէս հոտք որ ի ձայն աղի փութայցեն զկնի հովուաց»: Իսկ

վերջապահ գնդին մեծ գորագլուխքն Արշալիր եւ Համագասպեան՝ պատերազմին սաստիկ խառնուրդէն հեռու ըլլալով՝ իրենց պաշտօնը կատարեցին . յետ նահատակութեան արժանատրաց՝ եւ երեկոյին վրայ հասնելուն, ետ քաշեցին ուխտապահ գօրքերը, որ իրենցմէ յանդուգն եւ յառաջադէմ վարիչին կորուսեր էին . ուստի ոմանք այս երկու վերջապահ գօրագլխաց գնդին խառնուեցան, ոմանք այլ ցրուեցան զանազան կողմ, կամ բերդերու մէջ քաշուեցան: Տասն պարագլուխ նահատակեալ իշխանաց հետ, իւրաքանչիւրին ցեղէն (բաց յԱրծրունեաց) 276 կամ 286 կտրիճք ընկան բուն պատերազմին ատեն . որոց գրեթէ կէսն, 137 հոգի Վարդանայ հայրենակից՝ տիրասէր Մամիկոնեանք էին, մնացելոց մէջ բազմութիւնք են՝ Արտակայ տոհմակից Պալունիք, 57 հոգի: Ասոնցմէ դուրս են Արծրունիք, որոց թիւն թշնամութեամբ ջնջուած կ'երեւի . նոյնպէս նշանակուած չեն ուրիշ ցեղերէ եւ թագաւորական գնդէն մեռողաց զատ զատ թիւերն . բայց առաջիններուն հետ մէկտեղ բոլոր պատերազմին մէջ ընկողքն էին 696 հոգի . ասոնցմէ զատ քանի մը հարիւր այլ նոյն օրը ձեռք ընկան եւ փղաց ոտնակոխ եղան, կամ ամրացած տեղերէն բռնուած սպանուեցան . եւ ասոնցմով ու առաջիններով միագումար նահատակելոց թիւն եղաւ 1036 2 , զատ ի տասն նախարարաց: Իսկ թշնամեաց կողմէն պատերազմի մէջ ընկան ինն մեծ իշխան եւ 3544 մարդ . որ է ըսել եռապատիկ կամ քառապատիկ աւելի քան զՀայս:

Չ

Ի՞նչ եղաւ այս մեծ եւ հոշատը պատերազմին հետեւանքն: Հայք՝ բարոյապէս յաղթեցին, Պարսք աշխարհօրէն: Վասակ եւ Պարսիկք նախ սկսան առջի հնարքները բանեցընել . ուխտապահ Հայք այլ իրենց հնարքը, ոմանք բերդերու մէջ ամրացան, ոմանք այլ կռուով Պարսից դէմ կեցան, ինչուան անոնց սահմաններն այլ յարձակելով . եւ ստիպեցին զՅագկերտ՝ որ զիրենք ազատ թողու իրենց սուրբ կրօնից պաշտաման եւ իրենց հայրենի սովորութեանց մէջ: Յանձն առաւ եւ թողուց Յագկերտ . եւ որովհետեւ քահանայք եւ գլխաւոր նախարարք բողոքեր էին առ նա ընդդէմ Վասակայ, կանչեց զանոնք իր դուռը, զոմանս կամաւ եւ զոմանս բռնի . եւ բոլոր Պարսից ատենին առջեւ քննելով՝ յանցաւոր գտաւ զչարեացապարտ իշխանն Սիւնեաց Վասակ . եւ դատապարտեց մահուան բանտի, ուր եւ չարաչար ցաւերով մեռաւ: Քահանայից

գլխատրոները Ս . Ղեւոնդեանք, նահատակել տուաւ (յամի 453) . իսկ Հայոց նախարարները բանտեց ի Պարսկաստան, ուր եւ մնացին զանազան պատճառաւ 15 տարւոյ չափ . յետոյ Պերոզի թագաւորութեան ատեն արձակուեցան դարձան իրենց հայրենիքը, ուր կային դեռ սեւցած ուրացող Հայերէն . եւ նորէն ասոնց գրգռութեամբ սկսան Պարսք հակառակիլ ուխտապահաց, որոց գլուխ կեցաւ Վարդանայ արժանատր եղբօրորդին Վահան . եւ քանի մը տարի պատերազմով յօգնեցնելով Պարսից զօրավարները, վերջապէս ստիպեց եւ հաւանեցուց զթագաւորը՝ որ թողու զՀայս ազատ իրենց կրօնից եւ հայրենի սովորութեանց եւ իշխանութեանց մէջ . եւ նոյն ինքն Վահան եղաւ բոլոր Հայոց վերակացու իշխանապետ եւ իբր փոխարքայ, մարգպան կոչմամբ, յետ 35 տարւոյ պատերազմին Վարդանանց:

Ահա այս եղաւ հետեւանքն Շաւարշանի երրորդ հանդիսին: Այսպէս կատարեց Վարդան իր օր մըսածը՝ Պարսից թագաւորին եւ բոլոր արքունեաց առջեւ, թէ այսպիսի գործ մը պիտի գործեմ՝ որ բոլոր աշխարհք պատմելի մինչեւ յաիտեան: Յիրաւի, մեր նախահօր Հայկին օրէն եւ իրեն թոռնորդոյն Գեղեցիկն Արայի օրէն ինչուան յարքայորդին Թորոս եւ ինչուան ի քաջն Լիպարիտ, զօրավար Չ Լեւոնի, վերջին թագաւորին Հայոց, Հայ իշխանաց եւ զօրավարաց մէջ՝ ամենէն սիրելին եւ տօնելին մեր Հայոց ազգի խորանաց, սրտից եւ բերանոց մէջ՝ Է Կարմիրն Վարդան, որդի Համազասպայ Մամիկոնէից տեառն եւ Հայոց սպարապետի եւ երբեմն իշխանապետի, թոռն մեծին աստուածապատիւ հայրապետին Սահակայ Պարթեի . որոց քաջութեան եւ սրբութեան գրկաց մէջ ծնաւ, սնաւ, գործեց ու մեռաւ . պատուեալ կենօքն՝ ոչ միայն իր ազգէն՝ ինչուան թագաւորի տեղակալութեամբ կամ արքունի տան պահպանութեամբ, այլ եւ ի Յունաց եւ ի Պարսից . բոլոր Հայոց սպարապետ ըլլալով քսան տարի, ազգային եւ օտար նշանատր զօրավարաց շատէն վեր անցաւ . 42 մեծ ճակատամարտի մէջ յաղթող ելլելով, գոր աւելի Պարսից ծառայութեան մէջ ըրած էր զանազան աշխարհքներ, ինչուան Խորասանի եւ Թուրքաստանի անապատին մէջ Մէրու կամ Մէրվիրոտ գետոյն վրայ, ուր նոյն ինքն Յազկերտ թագաւորն ականատես ըլլալով անոր քաջութեանը, եւ ուրիշ գործքերն այլ լսելով, հիմա իր զօրաց կոտորածէն եւ նախարարաց սպանուելէն աւելի՝ Վարդանայ մահուան վրայ ցաւեցաւ, եւ դատափետեց զՎասակ իբրեւ պատճառ անոր մահուանը . եւ բոլոր արքունեաց առջեւ կ'ըսէր, «թէ գայնպիսի քաջ եւ պիտանի եւ զվաստակաւորն

մեր՝ գՎարդան ... եւ կայսր (Յունաց) եւ կամ Հոնաց արքայ բնութեամբ յինէն հանել կամէին, (եւ) ամենայն Արեաց (Պարսից) ուժովս կռուէի, եւ շտայի հանգչել, մինչեւ այսրէն յիս հանէի»: Պանծալի վկայութիւն եւ արժանատր համարմունք . բայց ափսո՛ս քեզ, ո՛վ կոյր թագաւոր, որ անխոհեմութեամբ կորուսիր այնպիսի պիտանի մարդը, զոր միայն իր ճշմարիտ սիրելի հայրենիքն եւ եկեղեցին անկորուստ պահեց մինչեւ ցայսօր:

Վարդան նահատակութեանն ատեն գոնէ յիսնամեայ պիտի ըլլար . իրեն ժառանգ արու զաւակ չթողուց, անոր համար Մամիկոնէից տէրութիւնն անցաւ իր Հնայեակ եղբորը, որ նոյնպէս քիչ ատենէն նահատակուելով, յաշորդեց անոր որդին հոշակաւոր կտրիճն Վահան, յետ դարձին ի Պարսից: Բայց դուստր մը ունէր Վարդան՝ իր հօրը եւ իր գեղեցկութեան պատճառաւ կրկին անուամբ կոչուած, Վարդենի եւ Շուշանիկ, որ Վրաց բռնեշխին կամ Գուգարաց նահապետին Վազգենի տիկին եղաւ, եւ անոր անգութ ձեռքով նահատակուեցաւ, երկայն եւ սքանչելի համբերութեամբ եւ իմաստութեամբ, յայտնի ցուցնելով որ դուստր է Վարդանայ եւ թոռնեայ Ս . Սահակայ, որոց փառք մ'այլ աւելցուց, մեր եկեղեցոյ տոնելի վկայուեաց պարծանք ըլլալով, եւ ցուցած արութեամբն՝ ոչ պակաս քան զքաջամարտիկ սուրբ գունդն Վարդանանց:

Վարդանայ անգին մարմինը, անշուշտ հաւատարիմ Մամիկոնեանքն՝ չթողուցին աւար Պարսից, այլ իբրեւ պանծալի նշան եւ դրոշ հայրենեաց՝ քաջաբար վերուցին: Նշխարքն զանագան տեղ ցրուեցան, եւ յետոյ մինչեւ ի Համշէն, ուր կու յիշուին եւ ի սկիզբն ԺԶ դարու: Բայց Ոգին հայրենեաց, հաւատարիմն Հայաստանի, որ իր քաջանշան որդոց վարձու եւ անմահութեան մէկ մէկ անակնկալ եւ վսեմական բան կամ անուն կու հնարէր, յափշտակեց Վարդանայ նշխարաց մէջէն այն թանկ գլուխը, որ զինքը դնելով բոլոր Հայ աշխարհին եւ եկեղեցոյ վրայ՝ աւելի բարձրացուց զանոնք, եւ այն շաջուտ աշը՝ որ երեսուն տարի արեւելից եւ արեւմտից մէջ քաջագոյն սրբագոյն վարիչ էր բանակաց, յաղթութեանց վճռահատ, եւ պսակաց հաւաքող, առաւ դրաւ՝ անոր մարմնով մայրենի նախահատուն եւ հոգով հօրն՝ հանգստարանին մէջ, Ս . Լուսաւորչի նշխարաց քով: ... Սեպուհ լերան սրբագան սարերուն մէջ միաբանեցան երեք վեհագոյն նշխարք եւ մեծագոյն յիշատակք եւ աստուածափառ նահատակքն Հայոց . ԳՐԻԳՈՐ, ՏՐԴԱՏ, եւ ՎԱՐԴԱՆ:

Է

Ս . Վարդանանց վրայ երդուած գանձ մը լսենք, որ բազմաց անծանօթ է .

«Որ գամենայն յամենայնի լնուս առատապէս, արարեր գիմանալի գօրս վերինս քեզ ի հաճութիւն . հաճեցար եւ ի մարդկանէ առնուլ սպասատր եւ փառաբանիչս անուանդ քում սրբոյ, ընդ որս եւ ի շառաիղէ մերոյն համայնից հօրն լուսոյ՝ գՔաշն Վարդան, հանդերձ իւրայովքն . գորս կարգեցեր ի գօրս վերինս գերապանձ լուսով գարդարեալ . ընդ որս Ատոմեանց գօրացն յայտնապէս տեսեալ ի վերուստ իջեալ պսակ լուսոյ բոլորեալ: Ընկալ Տէր, գաղաշանս միաբան ժողովելոցս քեզ ի հաճութիւն . աղաչենք:

Վսենական վիպասանութեամբ պատմաբանի ձեր գործ հանդիսի, Քաշո Վարդան, արի, երջանիկ, հանդերձ միախումբ ընդ քեզ վատելովք, թի հագարաց եւ երից տասանց հանդերձ վեցեկի թուով . լիալիր սիրով վատեալ ի սէրն Աստուծոյ . հանճարական ձեր իմաստութեամբ, մաքուր անձամբ, մաքրափայլ մտօք, մաքրագարդից գոլ հանդիսակից, արժանատրք յաւէտ գովութեան, տիրապէս հաճոյք Աստուծոյ: Ընկալ, եւ այլն:

Ստացայք ձեր անուն քաջութեան յերկինս եւ յերկրի, քաջ գօրականք, ընտրեալք յԱստուծոյ, որք ըստ հրամանի փրկչին Յիսուսի սպառագինեալք՝ մեցաւ հաւատովք, բարձեալք ըզխաշն տէրունական, յուսով հետեւեալք գիետ խաչելոյն, սուսերք Հոգւոյն, բանիւ բարձրելոյն ամրացուցեալք գմէջս իմանալիս, կրկին մարդով կրկնակի վատեալք որպէս գքաջք ի պատերազմի, վանեալք ցգունդս լեգէոնաց հակառակորդացն ճշմարտութեան: Ընկալ, եւ այլն:

Էական լուսոյն հետեւեալք՝ յերկրէ յերկինս ըռահ կազմեալ, վասն ճանապարհին ճշմարտութեանն՝ ճամբարապատ ճանապարհ հորդեալք, գխարդախութիւն ոնայնախոհացն՝ արդարութեանն ընտրանաւ յայտնեալ, սուր երկսայր ոնելօք բարձեալք_ վրիժապարտ ազգին վատշուէր ի մաքառումն պատրաստական . գծաղկածին դաշտն Վատնական՝ կարմրածաղիկ արեամբ ձեր ներկեալ, արգասատր ձերով հանդիսի գարդարելով գբամբիշ Քրիստոսի: Ընկալ, եւն:

Մուրֆք եւ սիրեցեալք եւ ճշմարիտ գօրականք ընտրեալք ըստ հաճոյից Տեառն պատրաստեալք, զբարիոք մարտն մատուցեալք ի յաղթական ձեր պատերազմի, զբրաբիոնն ձեր մրցանակի արժանապէս յանձին ընկալեալք . որպէս զքաջ յաւէտ նահատակք արիական ձեր պատերազմաւ թեւակոխեալք ի վերնասիովն ի կենդանոյն քաղաք Աստուծոյ, ի պօղոսեան մայրն առաքելոյ, քաղաքակիցք գտայք հանդիսի . բարեխօս լերուք առ Տէր վասն տօնողացս գլխատակս ձեր, գօրականք ընտրեալք: Ընկալ, եւ այլն:

Այս գանձիս կամ քարոզիս հեղինակն է Մովսէս ոմն, ինչպէս որ անգլուխ տառքն ցուցընեն,, որոյ առաջին եւ վերջին տներն ատելորդ սեպեցինք հոս դնել, անոնց մէջ Վարդանանց յիշատակութիւն չըլլալով . օրինակն 620 տարուան ձեռագրէ մը առնուած է, որ հեղինակին բաւական հնութիւնն այլ ցուցընէ: